Հաստատում եմ՝

Ավանդական բժշկության համալսարանի

Ռեկտոր, Ն.Խ. Սարիբեկյան

«31» 08 2020 թ.

Ավանդական բժշկության համալսարանի
Գիտական մասի
Աշխատանքային պլան 2020-2025 թթ.

N	Առաջադրանք	Աշխատանքների նկարագրությունը և հիմնավորումը	Կատարման ժամկետները	Պատասխա-նատու
1	Գիտական հետազոտություններ	Նախատեսվում են ՀՀ-ում ժողովրդական բուսաբուժության պրակտիկաների հետազոտություններ: Գիտական հետազոտություններ անելիս համագործակցելու ենք ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի և Բուսաբանության ինստիտուտի գործընկերների հետ:	2020-2025	ԱԲՀ գիտական մաս
		Հետազոտություն. «ՀՀ մոլոկանների ժողովրդական բուսաբուժությունը, նրանց օգտագործած դեղաբույսերը և այլ հարակից թեմաներ»:	2020-2023	
		Հետազոտությունները ժողովրդական բուսաբուժական պրակտիկաների ուղղությամբ ՀՀ Վայոց ձորի մարզում:	2024-2025	
2	Ուսանողների ներգրավում գիտական աշխատանքներին	Պլանավորում ենք լավագույն ուսանողներին ներգրավել համալսարանում ընթանալիք գիտական աշխատանքներում՝ փորձելով հետազոտել ուսանողների երկրներում իրենց համայնքների ժողովրդական բուսաբուժական պրակտիկաները և դեղաբույսերի օգտագործումը:		ԱԲՀ գիտական մաս

3	Հոդվածների հրապարակում	Նախատեսում ենք յուրաքանչյուր տարի հրատարակել առնվազն մեկ գիտական հոդված: Կարևոր է ԱԲՀ-ի ներկայացվածությունը գիտական շրջանակներում ապահովելու խնդիրը: Այդ առումով առաջնահերթ նշանակություն ունի գիտական հրապարակումներում (ինչպես նաև գիտաժողովների մասնակցության ժամանակ) հեղինակների ԱԲՀ անունից հանդես գալը: Ակնկալում ենք գոնե 2-3 տարին մեկ հրատարակվել միջազգային գիտական շտեմարաններում (օրինակ՝ Scopus) ինդեքսավորված պարբերականներում, որը ԱԲՀ անունը կբերի նաև վերոհիշյալ գիտական հարթակներ:	2020-2025	ԱԲՀ գիտական մաս
4	ԱԲՀ աշխատակիցների մասնակցություն գիտաժողովների	Նախատեսում ենք միջինում տարեկան մեկ գիտաժողովի մասնակցություն: Այս փուլում չենք մասնավորեցնում գիտաժողովների հանրապետական, ռեգիոնալ կամ միջազգային լինելը, սակայն ճանապարհորդելու հնարավորություններ (ներառյալ ֆինանսական) լինելու դեպքում ակնկալում ենք մասնակցել նաև արտերկրում իրականացվող միջազգային գիտաժողովների: Գիտաժողովների մասնակցությունը, ինչպեսև գիտական հրապարակումների դեպքում, կարևոր է ԱԲՀ-ի գիտական հարթակներում ներկայացվածությունը ապահովելու համար:	2020-2025	ԱԲՀ գիտական մաս
5	Գիտաժողովների կազմակերպում	ԱԲՀ 30-ամյակին նվիրված միջազգային գիտաժողովի պլանավորման աշխատանքներ	2020 – 2021 մարտ	ԱԲՀ գիտական մաս
		ԱԲՀ 30-ամյակին նվիրված միջազգային գիտաժողովի իրականացում: Գիտաժողովի նյութերը պլանավորում ենք հրատարակել համալսարանի ստեղծվելիք պարբերականի անդրանիկ համարում:	2021 հոկտեմբեր	
		Հետագայում գիտաժողովներ կկազմակերպվեն մոտ երեք տարին մեկ անգամ պարբերականությամբ կամ ըստ անհրաժեշտության:	2022-2025	
		Ուսանողական գիտաժողովներ նախատեսվում է անցկացնել ամեն տարի:	2020-2025	

6	ԱԲՀ-ում կատարվող գիտական հետազոտությունների մասին դասախոսությունների կազմակերպում	ԱԲՀ-ում կատարվելիք գիտական հետազոտությունների մեթոդաբանության, դաշտային և հետդաշտային հետազոտությունների ընթացքի, ինչպես նաև ստացված արդյունքների մասին կկազմակերպվեն դասախոսություններ ԱԲՀ ուսանողների և պրոֆեսորադասախոսական կազմի համար:	2020-2025	ԱԲՀ գիտական մաս
7	Պարբերականի նախագծում և հրատարակում	Պարբերականի նախագծման աշխատանքներ	2020	ԱԲՀ գիտական մաս
		Պարբերականի առաջին համարի հրատարակումը նախատեսվում է ԱԲՀ 30-ամյակի գիտաժողովի նյութերի հիման վրա	2021 թ.-ի վերջ կամ 2022 թ.-ի սկիզբ	
		Հետագայում ԱԲՀ պարբերականը նախատեսում ենք հրատարակել որպես տարեգիրք:	2022-2025	